ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 մայիսի 2023 թ. թիվ 3 /1811/

6. «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ ստեղծելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա» ոչ առևտրային կազմակերպության նախագահությունը որոշում է.

1. Հիմնադրել «Գեղարդ » գիտավերլուծական հիմնադրամ:
2. Սահմանել, որ «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի հիմնադիրը «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա» ոչ առևտրային կազմակերպությունն է:
3. Հաստատել «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի կանոնադրությունը՝ համաձայն Հավելվածի:
4. «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Ռոբերտ Պետրոսի Ղազարյանին:
5. «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել հիմնադրամի պետական գրանցումը:
6. «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին ՝ «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի պետական գրանցումից հետո երկամսյա ժամկետում «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա» ոչ առևտրային կազմակերպության

նախագահության հաստատմանը ներկայացնել «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ա.Ս. ՍԱՂՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.Մ.ԻՇԽԱՆՅԱՆ